ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2021, № 2, 79-89 *Հոգեբանություն*
https://doi.org/10.46991/BYSU: E /2021.12.2.079

«ՄԵԾ ՀՆԳՅԱԿ» ՀԱՅԱԼԵԶՈՒ ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐՑԱՐԱՆԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ԱՍՏՂԻԿ ՍԵՐՈԲՅԱՆ

Հոդվածում ներկայացված են «Մեծ հնգյակ» հարցարանի ստեղծման փուլերը, հուսալիության և վալիդության ստուգման ընթացակարգերը: Երկու հաջորդական հետազոտական փուլերով ամբողջ գործընթացն իրականացվել է: Ի սկզբանե «Մեծ հնգյակ» հարցարանը բաղկացած էր 150 հարցից, որոնցով չափվում էին 5 հիմնական գործոնները և 30 ենթագործոնները: Սակայն հարցարանի մշակման 2 փուլերում, հուսալիության և վալիդության չափանիշները ստուգելուց հետո, հարցերի թիվը կրճատվեց՝ թողնելով 125-ը, իսկ ենթագործոնների թիվը դարձավ 25՝ յուրաքանչյուր գործոնի համար 6-ի փոխարեն 5 ենթագործոն: Արդյունքում ստեղծվել է հայալեզու հուսալի և վալիդ հարցարան, որը կարելի է օգտագործել անձնային գծերը չափելու համար, ինչպես նաև կիրառել բոլոր այն ոլորտներում, որտեղ անհրաժեշտություն կա բացահայտելու մարդկանց բնավորության առանձնահատկությունները, կազմելու անձնային պրոֆիլներ, օրինակ՝ մարդկային ռեսուրսների կառավարում, կրթություն և այլն:

Բանալի բառեր – *«Մեծ հնգյակ», հարցարանի մշակում, ներքին հուսալիության ստուգում, թեստ-ռեթեստային հուսալիության ստուգում, հարցարանի վալիդություն*

Հայաստանում հոգեբանական գիտության զարգացմանը զուգահեռ՝ անհրաժեշտություն է առաջանում հետազոտական նոր մեթոդիկաների, մասնավորապես թեստերի ու հարցարանների ստեղծման կամ տեղայնացման: Հետազոտողները իրենց աշխատանքներում հիմնականում օգտագործում են ռուսերենից կամ անգլերենից բառացի թարգմանած թեստեր, որոնք չեն անցել հուսալիության և վալիդության ստուգման գործընթացներ: Միշտ չէ, որ վերջիններս ճիշտ են ներկայացնում բնօրինակի իմաստը, իսկ դա արդեն հավաքած տվյալների հավաստիությունը կասկածելի է դարձնում: Բացի դրանից՝ շատ հոգեբանական հարցարաններ և չափման մեթոդիկաներ, որոնցից է նաև «Մեծ հնգյակը» չափող ամենահայտնի NEO-PI հարցարանը, վճարովի հիմունքներով են հասանելի:

«Մեծ հնգյակի» տեսությունը և չափման գործիքը լայնորեն կիրառվում են ժամանակակից հոգեբանության մեջ անձնային առանձնահատկությունները ուսումնասիրելու համար:

Հոդվածում ներկայացված են «Մեծ հնգյակ» հարցարանի ստեղծման փուլերը, հուսալիության և վալիդության ստուգման ընթացակարգերը:

Տեսական հիմքեր

«Մեծ հնգյակի» տեսությունը անձնային առանձնահատկությունները մեկնաբանում է վարքային դիսպոզիցիաների կամ գծերի տեսանկյունից: Հիմնվելով հոգելեզվաբանական մոտեցման[1] և գործոնային վերլուծության մեթոդի վրա՝ հետազոտողները եզրակացրել են, որ անձին կարելի է նկարագրել հինգ հիմնական գծերի միջոցով, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է անձի մեկ կարևորագույն կողմ, որը դրսևորվում է նրա գործունեության մեջ և մարդկանց հետ շփվելիս[2]: Հինգգործոնային մոդելը համարվում է անձի հուզական, կոգնիտիվ, դրդապատճառային բազային ոճերի, ինչպես նաև միջանձնային հարաբերությունների կառուցման անհատական ոճերի ուսումնասիրման գործիք[3]: Այդ հինգ գործոններն են՝ նեյրոտիզմը, էքստրավերտությունը, լայնախոհությունը, բարյացակամությունը, բարեխղճությունը: Այս գծերը կայուն են ժամանակի մեջ, անկախ են իրավիճակից, և դրանց միջոցով հնարավոր է համակողմանի նկարագրել մարդուն: Գործոններից յուրաքանչյուրն իր հերթին ընդգրկում է մի քանի ենթագործոն[4]:

Այժմ ներկայացնենք հինգ հիմնական գործոնների նկարագրությունը:

Էքստրավերտությունը բնութագրում է անձի հարաբերությունները արտաքին աշխարհի հետ: Էքստրավերտները շատ արագ են մտերմանում մարդկանց հետ, խիստ կարևորում են շրջապատի հետ շփումները, ջերմ հարաբերությունները: Իրապես սիրում են մարդկանց և բարձրաձայնում իրենց դրական զգացմունքները նրանց նկատմամբ: Նրանք մարդկանց շրջապատում գտնվելուց հաճույք են ստանում: Նրանց դուր է գալիս, երբ շրջապատի մարդիկ հիանում են իրենցով: Երբեմն իրավիճակի վերահսկողությունն իրենց ձեռքն են վերցնում՝ վստահորեն գործելով նպատակների իրականացման ուղղությամբ: Տարբեր իրավիճակներում արտահայտում են իրենց կարծիքը և ուղղորդում մյուսներին: Շատ են սիրում սուր զգացողություններ և դիմում են ռիսկի: Խանդավառվում են նոր տպավորություններից և կարող են չմտածված արարքների դիմել: Էքստրավերտներին բնորոշ է դրական ապրումների շատ լայն շրջանակ, որը ներառում է ուրախությունը, լավատեսությունը, երջանկությունը և այլն[5]: Էքստրավերտության ենթա-

---

[1] Տե՛ս **Goldberg L.** The development of markers for the Big-Five factor model. Psychological Asessment 4 (1), 1992, էջ 26-42:

[2] Տե՛ս **Ashton M., Lee C.** A theoretical basis for the major dimensions of personality. European journal of personality, 15, 2001, էջ 327-353:

[3] Տե՛ս **Hastings B.** ROY G. BIGV and the OCEAN A Heuristic Metaphor for Understanding the Role of the Five-Factor Model in Personality Research. *Theory and Pychology*, 17(1), 2007, էջ 87-99: **McCrae R., Costa P. Jr.** Empirical and theoretical status of the five-factor model of personality traits. In *Boyle G., Matthews G. & Saklofske D. (eds) The SAGE Handbook of Personality Theory and Assessment: Volume 1 — Personality Theories and ModelsI,* SAGE Publications Ltd, 2008, էջ 273-294:

[4] Տե՛ս **McCrae R., John O.** An introduction to the Five factor model and its applications. Journal of personality 60(2), 1992, էջ 175-215:

[5] Տե՛ս **Watson D., Clark L.** Extravesion and its positive emotional core. In Hogan R., Johnson J., Briggs S (Eds.), Handbook of personality psychology, New York, Academic Press, 1997, էջ 767-793:

գործոններն են *ընկերասիրությունը, մարդամոտությունը, հաստատակամությունը, ստիմուլյացիան, կենսուրախությունը*:

Բարյացակամությունը ցույց է տալիս, թե որքանով է անձը պատրաստ և հակված համագործակցելու ու համերաշխ ապրելու այլ մարդկանց հետ: Բարյացակամ անձինք մարդկանց հետ շփվելիս կեղծավորության ու մանիպուլյացիաների կարիք չեն տեսնում, ինչպես նաև նրանք անկեղծ են, շիտակ ու պարզ, փափկասիրտ են ու կարեկցող: Նրանք միջնորդավորված զգում են ուրիշների ցավը և շատ արագ լցվում են խղճահարության ու կարեկցանքի զգացումով: Բարյացակամ անձինք մյուսներին օգնելը համարում են իրական պարգև: Հետևաբար, նման անձինք ընդհանուր առմամբ պատրաստակամ են օգնելու կարիքավորներին՝ գտնելով, որ ուրիշների համար մի բան անելն ավելի շուտ ինքնաբավարարման ձև է, քան անձնազոհություն: Պատրաստ են անտեսել սեփական շահերը՝ մյուսների հետ հարաբերությունները չվնասելու համար: Միշտ ձգտում են մարդկանց հետ դրական, լավ հարաբերություններ պահպանել, չեն սիրում առճակատումներ, հակված են փոխզիջման, փոխօգնության, համագործակցության, թիմային աշխատանքի: Նման անձինք չեն կարծում, որ իրենք մյուսների համեմատ նկատելի առավելություններ ունեն ու արժանի են ավելիին, քան մյուսները: Շատ համեստ են, չեն սիրում լինել ուշադրության կենտրոնում, խոսել իրենց մասին, հարգում և ընդունում են մյուսների արժանիքները, իրենց ավելի բարձր չեն դասում դիմացինից[6]: Բարյացակամության ենթագործոններն են *ճշմարտասիրությունը, մարդասիրությունը, համագործակցությունը, համեստությունը, կարեկցանքը*:

Բարեխղճությունը ցույց է տալիս, թե ինչպես է անձը կարգավորում, վերահսկում և ուղղորդում իր ազդակները, մղումները: Բարեխիղճ անձինք գրեթե միշտ համոզված են, որ կունենան հաջողություն, քանի որ առողջ բանականության ու ձգտման տեր են: Բարեխիղճ անձը կարող է չափազանց տարվել աշխատանքով՝ անտեսելով կյանքի մյուս ոլորտները: Ամբողջությամբ նվիրվում է աշխատանքին, բոլոր ուժերը ներդնում է նպատակների իրականացման համար, խիստ նպատակասլաց է: Միշտ քրտնաջանորեն աշխատում է՝ գերազանց արդյունքի հասնելու համար: Կյանքում ունի հստակ նպատակ և հաջողությամբ շարժվում է այդ ուղղությամբ: Որոշումներ կայացնելիս անձը երկար մտածում է, ինչպես նաև հակված է գործելուց առաջ եղած հնարավորությունները ծանրութեթև անելու: Բարեխիղճ անձինք ունեն նաև սեփական կյանքի վերահսկողության զգացում: Գործի ավարտը տեսնելու ցանկությունը ստիպում է նման մարդկանց հետևողականորեն և համառորեն գործելու: Այս զծի վառ արտահայտվածությամբ անձինք

---

[6] Տե՛ս **McCrae R., Costa P. Jr.** A five factor theory of personality. // O. John, L. Pervin (Eds.), Handbook of personality: Theory and research, 2nd ed. New York, NY: Guilford Press, 1999, էջ 143-144:

գործում են խիստ պլանավորված և կազմակերպված, ունեն անելիքների ցանկ, որն իրագործում են հաջորդաբար: Միշտ ձգտում են ամեն ինչ ծրագրել նախօրոք և հետևել հաջորդական քայլերին: Այդ պատճառով նրանց գործելաոճը հաճախ առանձնանում է քիչ ճկունությամբ կամ դրա բացակայությամբ: Չնայած դրան՝ նման անձինք միշտ պարտաճանաչ են, հետևում են սահմանված կանոններին: Պատասխանատու և վստահելի են: Բարեխղճության ենթագործոններն են *ինքնարդյունավետությունը, ճշտապահությունը, պարտաճանաչությունը, նպատակասլացությունը, զգուշավորությունը*:

Նեյրոտիզմը բնութագրում է անձի՝ բացասական հույզեր ապրելու հակվածությունը: Բարձր նեյրոտիզմով անձինք անհանգստանում են ամեն մի առիթով, շատ տագնապում են անսովոր իրավիճակներում, ունենում են մտավախություն, որ կարող է վատ բան պատահել իրենց կամ մտերիմների հետ, դյուրագրգիռ են, այդ պատճառով բավականին հաճախ կորցնում են ինքնատիրապետումը և թույլ տալիս սխալներ: Հաճախ են իրենց տխուր, միայնակ ու ընկճված զգում, էներգիայի և նախաձեռնողականության պակաս ունենում: Զգայուն են, և շատ է հուզում, թե ինչ կարծիք ունեն շրջապատի մարդիկ իրենց մասին: Նրանց մտահոգությունը, թե շրջապատում կարող են իրենց ծաղրել կամ մերժել, նպաստում է, որ անծանոթ մարդկանց միջավայրում ամաչեն ու անհարմարավետություն զգան: Նրանց անհանգստությունն ու վախը, որ ուրիշները կարող են իրենց քննադատել կամ ծաղրի ենթարկել, չափազանցված է և իրականությանը չի համապատասխանում: Սակայն նման անձանց անճարությունն ու անհանգստությունը կարող են այս վախերը իրենք իրենց համար դարձնել լիովին իրագործելի: Խուճապի են մատնվում և շփոթվում են անսովոր, լարված իրավիճակներում, չեն կողմնորոշվում ու չեն կարողանում հաղթահարել դժվարությունները՝ ունենալով անօգնականության զգացում, ինչն էլ հանգեցնում է անվստահության ու սխալների: Նեյրոտիզմ գծի դրսևորումներից է նաև զայրույթը, երբ անձը ունենում է զայրույթի պոռթկումներ, քանի որ իրադարձությունները չեն ընթանում իրենց ցանկալի հունով: Զգայուն են, երբ արժանանում են անարդար վերաբերմունքի և շատ են վրդովվում ու չարանում, երբ իրենց խաբված են զգում[7]: Նեյրոտիզմի ենթագործոններն են *տագնապայնությունը, զայրույթը, դեպրեսիվությունը, ամաչկոտությունը, խոցելիությունը:*

Լայնախոհությունը բնութագրում է մտածողության ոճը: Լայնախոհ անձանց բնորոշ է վառ երևակայություն, ստեղծարարություն, որոնցով տարբերվում են ավելի պրագմատիկ, պահպանողական մարդկանցից: Բացի վառ երևակայությունից՝ նրանք ունեն նորարարական գաղափարներ, որոնք ծառայեցնում են կյանքի միօրինակությունը ա-

[7] Տե՛ս **McCrae R., Costa P. Jr.** A five factor theory of personality. In O. John, L. Pervin (Eds.), Handbook of personality: Theory and research, 2nd ed. New York, NY: Guilford Press, 1999, էջ 139-153:

վելի հետաքրքիր դարձնելուն: Չեն կառչում փաստերից ու կարծրատիպային լուծումներից, այլ ազատություն են տալիս մտքին: Արվեստասեր են, սիրում են գեղեցիկը և՛ արվեստում, և՛ բնության մեջ: Նրանք հեշտությամբ ներգրավվում և ամբողջությամբ տարվում են մշակութային, բնության հետ կապ ունեցող տարբեր միջոցառումներով: Պարտադիր չէ, որ ունենան արվեստագիտական կրթություն կամ տաղանդավոր լինեն, չնայած շատերը կարող էին լինել: Բացի դրանից՝ շատ հակված են ուրիշների ներաշխարհը հասկանալու, միշտ ձգտում են գիտակցել ու հասկանալ սեփական զգացմունքները և ուսումնասիրել մարդկանց: Լավ են ըմբռնում սեփական և ուրիշների ապրումները: Շարունակ ձգտում են նոր բաներ փորձել, սիրում են փոփոխություններ և աշխատում փոխել կյանքի միօրինակ ընթացքը, ինչն էլ, իր հերթին, կարող է հանգեցնել արկածախնդրության: Լայնախոհ մարդիկ ունեն ճանաչողական արտահայտված ակտիվություն, սիրում են զբաղվել մտավոր լուրջ գործունեությամբ, սիրում են խորհել բարդ գաղափարների մասին («խաղալ գաղափարների հետ»), բանավիճել ինտելեկտուալ տարբեր խնդիրների շուրջ[8]: Լայնախոհության ենթագործոններն են *երևակայությունը, արվեստասիրությունը, հուզականությունը, արկածախնդրությունը, ինտելեկտուալ ակտիվությունը:*

Հարցարանի կազմում

«Մեծ հնգյակի» գործոնները չափող հայերեն հարցարանի պնդումները կազմելու համար օգտվել ենք International Personality Item Pool-ից, որտեղ հավաքված են անձնային բոլոր գծերը չափող գործիքների սանդղակները[9]: Նշված կայքում տեղադրված են ավելի քան 3000 պնդումներ, ու այդ պնդումներից բաղկացած 250 սանդղակներ: Պնդումները վերցված են անձնային գծերը չափող ստանդարտացված մեթոդիկաներից: Պնդումներն ու սանդղակները համարվում են օգտագործման համար բաց աղբյուր, որից կարող են օգտվել հետազոտողները հարցարաններ կազմելու համար:

Հայկական «Մեծ հնգյակի» հարցարանի պնդումները հիմնականում վերցված են IPIP շտեմարանում տեղադրված NEO-PI շտեմարանից: Փորձագետների խումբը ընտրել է այնպիսի պնդումներ, որոնք համարել է մոտ հայկական մշակույթին և լեզվամտածողությանը: Բոլոր պնդումները անցել են երկփուլ թարգմանության գործընթաց (անգլերենից հայերեն և հետթարգմանություն): Նախնական հարցարանը բաղկացած էր 150 պնդումից: Յուրաքանչյուր մեծ գործոն ներկայացվել է վեց ենթագործոնով: Յուրաքանչյուր ենթագործոն բաղկացած է 5 պնդումից, հետևաբար՝ յուրաքանչյուր մեծ գործոն՝ 30 պնդումից: Բացի

---

[8] Տե՛ս **McCrae R.** Openness to experience as a basic dimension of personality. Imagination, cognition and personality, № 13, 1993-1994, էջ 39-55:

[9] Տե՛ս International Personality Item Pool: A Scientific Collaboratory* for the Development of Advanced Measures of Personality and Other Individual Differences / http://ipip.ori.org:

դրանից՝ հարցարանում ընդգրկվել է նաև 5 լրացուցիչ պնդում, որոնցից 4-ը վերաբերում է ենթագործոնների համագործակցությանը, իսկ 1-ը՝ ակտիվությանը: Լրացուցիչ պնդումներ ընդգրկելու անհրաժեշտությունը պայմանավորված է այն բանով, որ նշված ենթագործոնների պնդումների ընտրության հարցում փորձագետները չեն եկել ընդհանուր հայտարարի, այդ պատճառով որոշվել է ընտրություն կատարել՝ հիմնվելով հետագա վիճակագրական ցուցանիշների վրա:

«Մեծ հնգյակի» պնդումներից յուրաքանչյուրի համար մասնակիցը պետք է նշի, թե ինչ չափով է համաձայն դրան: Համաձայնության աստիճանը չափվում է հինգմիավորանոց սանդղակով, որտեղ 1 թիվը նշանակում է՝ «ընդհանրապես համաձայն չեմ», 2-ը՝ «համաձայն չեմ», 3-ը՝ «ո՛չ համաձայն եմ, ո՛չ համաձայն չեմ», 4-ը՝ «համաձայն եմ», իսկ 5-ը՝ «միանշանակ համաձայն եմ»:

Առաջին փուլ

Ընտրանք

Առաջին փուլի հարցմանը մասնակցել է ՀՀ-ում գործող բուհերի (ԵՊՀ, ՀԱՊՀ, ՀՊՏՀ, ԵՊԲՀ, ՀԱՄՀ և այլն) 259 ուսանող ($M_{տարիք}$=20, $SD_{տարիք}$=2.29, կանայք՝ 71%): Ընտրանքում բաշխվածությունն ըստ բնակության վայրի հետևյալն է. մոտավորապես կեսը կամ 49.8%-ը Երևանից են, իսկ մյուս մասը մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերից: Ընտրանքի գերակշռող մասը՝ 90%-ը, բակալավրիատի տարբեր կուրսերի ուսանողներ են, իսկ մնացածը՝ մագիստրատուրայի: Ուսանողների 61.8%-ը միայն սովորում է, 25.6%-ը նաև աշխատում է, իսկ 12.6%-ը զբաղված է կամավորական աշխատանքով:

Հուսալիություն

Հարցարանի կայունությունը կամ արտաքին հուսալիությունը ստուգվել է թեստ-ռեթեստային մեթոդով: Մեթոդի սկզբունքն այն է, որ հետազոտվողների մի մասը նույն հարցարանը լրացրել է երկու անգամ՝ երկու ամիս ընդմիջմամբ: Ժամանակի նման հատված է ընտրվել, որովհետև անձնային գծերը ժամանակի կարճ հատվածի համար կայուն հատկանիշներ են, և երկու ամիսը բավական չէ՝ էական փոփոխությունների համար, սակայն բավարար է, որ հետազոտվողը մոռանա այն պատասխանները, որոնք տվել է նախորդ անգամ[10]: Հիմնական հետազոտական ընտրանքից թեստ-ռեթեստային հետազոտությանը մասնակցել է 69 ուսանող ($M_{տարիք}$ =19.8, $SD_{տարիք}$=1.346, կանայք՝ 71 %): Թեստ-ռեթեստային կորելյացիոն գործակցի արդյունքները համարվում են հուսալի, եթե գործակիցը 0.75-0.8 է կամ ավելի[11]: «Մեծ հնգյակի» չորս գործոնները՝ նեյրոտիզմը, էքստրավերտությունը, բարյացակամությունը և բարեխղճությունը, համապատասխանում են այդ չափանիշին, իսկ լայնա-

---

[10] Տե՛ս **Митина О. В.** Разработка и адаптация психологических опросников. М.: Смысл, 2011, էջ 57-71:

[11] Տե՛ս նույն տեղը:

խոհության համար գործակիցը մոտավորապես 0.6: Սա նշանակում է, որ սանդղակում կան պնդումներ, որոնք վերանայման կարիք ունեն:

Հարցարանի ներքին համաձայնվածությունը կամ, որ նույնն է, ներքին հուսալիությունը ստուգվել է Կրոնբախի ալֆայի ցուցանիշով: Դա ներքին համաձայնեցվածության չափում է, որը ցույց է տալիս, թե տվյալ սանդղակը կազմող պնդումները վիճակագրորեն ինչքանով են իրար մոտ որպես խումբ[12]:

Հետազոտական տվյալների վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ հինգ հիմնական գործոններից չորսի ալֆաները ստացվել են 0.8-ից ավելի, որը բարձր ներքին հուսալիության ցուցանիշ է, միայն լայնախոհությունն է, որ ստացվել է 0.7 (տե՛ս աղյուսակը): Ինչ վերաբերում է ենթագործոններին, ապա շատ ցածր ներքին հուսալիության արդյունք ենք ստացել չափի զգացման պակասի, ակտիվության, հուզականության, արկածախնդրության, ինտելեկտուալ ակտիվության, լիբերալիզմի, վստահության, համագործակցության, ինքնարդյունավետության, պարտաճանաչության և կամքի ուժի համար:

Վալիդություն

Կրոնբախի ալֆայի ցուցանիշը կախված է պնդումների քանակից. որքան քիչ են լինում պնդումները, այնքան մեծ է հավանականությունը, որ ալֆան ցածր արդյունք ցույց կտա[13]: Այդ պատճառով, բացի Կրոնբախի ալֆայի ցուցանիշը ստուգելուց, գործոնային վերլուծությամբ ճշտել ենք նաև սանդղակների կոնստրուկտային վալիդությունը՝ որպես վերլուծության մեթոդ ընտրելով գլխավոր բաղադրիչների մեթոդը (PCA-principal components analysis)[14]: Հետազոտական տվյալների համար գործոնային վերլուծության մեթոդ կիրառելու համապատասխանությունը ստուգվել է Կայզեր-Մեյեր-Օլկինի ադեկվատության և Բարտլետի՝ ոլորտայնության չափորոշիչների միջոցով (KMO-Kaiser-Meyer-Oikin Measure of sampling Adequacy and Bartlett test of sphericity):

Գործոնային մոդելներից Կայզեր-Մեյեր-Օլկինի ադեկվատության գործակիցը 0.6-ից ցածր է ստացվել ենթագործոններից չափի զգացման պակասի, ակտիվության, վստահության, համագործակցության, կամքի ուժի և լայնախոհության գործոնի 4 ենթագործոնների համար: Սա նշանակում է, որ նշված մոդելները վիճակագրորեն անպիտան են, քանի որ գործակիցը ցույց է տալիս փոփոխականների միջև եղած մասնակի կորելյացիոն կապերի քանակը, որոնք հնարավորինս քիչ պետք է լինեն[15]: Այսպիսով՝ համադրելով Կրոնբախի ալֆայի և գլխավոր բաղադրիչների

---

[12] Տե՛ս **Howitt, D., & Cramer, D**. (2003). An introduction to statistics in psychology. Harlow, England: Prentice Hall, 2003, էջ 447-449:

[13] Տե՛ս **Taber K. S**. The Use of Cronbach's Alpha When Developing and Reporting Research Instruments in Science Education // Research in Science Education, 48 (6), 2018, էջ 1273-1296:

[14] Տե՛ս **Peter S.** (2017) http://www.open-access.bcu.ac.uk/6076/1/_staff_shares_storage%20500mb_Library_ID112668_Stats%20Advisory_New%20Statistics%20Workshops_18ExploratoryFactorAnalysis_Exploratory- FactorAnalysis4.pdf (24.02.2021), էջ 1-7:

[15] Տե՛ս նույն տեղը:

մեթոդի վերլուծության արդյունքները կարող ենք ասել, որ թեև ինքնարդյունավետության և պարտաճանաչության ներքին հուսալիությունը ցածր էր, սակայն վալիդությունը բարձր է ստացվել, այսինքն՝ տվյալ սանդղակները կարելի է օգտագործել հետագա վերլուծության համար։ Ենթագործոններից չափի զգացման պակասի, ակտիվության և կամքի ուժի և՛ հուսալիությունը, և՛ վալիդությունը ցածր են, այդ պատճառով որոշվել է դրանց պնդումները հանել ընդհանուր հարցաթերթից։ Նման որոշման պատճառ է եղել նաև այն, որ նշված սանդղակների պնդումների գործոնային գործակիցը 0.3-ից ցածր էր ստացվում, երբ գործոնային վերլուծությունը կատարում էինք հինգ մեծ գործոնները կազմող փոփոխականներով[16]։ Ինչ վերաբերում է բարյացակամության գործոնի վստահություն և համագործակցություն ենթագործոններին, ապա երբ դիտարկում ենք վերջիններիս գործոնային վերլուծության արդյունքները, վստահության հինգ պնդումներից երկուսի գործոնային գործակիցները 0.3-ից ցածր են։ Ինչպես նշել էինք, համագործակցության համար վերցվել են 4 լրացուցիչ պնդումներ, որոնցից 2-ը՝ «Քեն պահող եմ», «Առաջնահերթությունը տալիս եմ իմ անձնական շահին» գործոնային գործակիցները ամենաբարձրն են ստացվել։ Համագործակցության գործոնային մոդելում ընդամենը 1 պնդում կա, որ ունի 0.3-ից ցածր գործոնային գործակից։ Այդ իսկ պատճառով որոշվեց վստահություն ենթագործոնի պնդումները հանել, քանի որ դրանով ստացված արդյունքները հուսալի և վալիդ չէին։ Հարցարանից հանվել են նաև համագործակցության ցածր գործոնային գործակից ունեցող 4 պնդումները («Հեշտ եմ լեզու գտնում մարդկանց հետ», «Հարգում եմ դիմացինին», «Առաջին հերթին դիմացինիս մասին եմ մտածում», «Կարող եմ ձայնս բարձրացնել ուրիշների վրա»)։

Երկրորդ փուլ

Հետազոտության առաջին փուլում հավաքված արդյունքների հիման վրա նորից վերանայվել են բոլոր հինգ գործոններն ու երեսուն ենթագործոնները կազմող փոփոխականները ինչպես իմաստային, այնպես էլ վիճակագրական տարբեր ցուցանիշների առումով։ Արդյունքում ստացվել է, որ չափի զգացումի պակաս, ակտիվություն, լիբերալիզմ, վստահություն, կամքի ուժ ենթագործոնները վիճակագրորեն ոչ այնքան հուսալի ու վալիդ արդյունքներ են տալիս։ Այդ պատճառով որոշվել է դրանք չընդգրկել հարցարանի մեջ։ Այսպիսով՝ հետազոտության առաջին փուլից հետո «Մեծ հնգյակը» չափող հարցարանի 150 հարցից 25-ը կրճատվեց։ Վերանայվեցին նաև որոշ հարցեր։

Նոր հարցարանում հինգ մեծ գծերից յուրաքանչյուրը չափվում է 25 պնդումով։ Բացի 5 հիմնական գծերից՝ չափվում է նաև 25 ենթագիծ՝ ամեն մեծ գործոնի համար 5 ենթագործոն։ Դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված է 5 պնդում, որոնցից յուրաքանչյուրի համար մասնակիցը պետք է նշի, թե ինչ չափով է համաձայն դրան։ Համաձայ-

[16] Տե՛ս նույն տեղը։

նության աստիճանը չափվում է հինգմիավորանոց սանդղակով, որտեղ 1 թիվը նշանակում է, որ «ընդհանրապես համաձայն չեմ», 2-ը՝ «համաձայն չեմ», 3-ը՝ «ո՛չ համաձայն եմ, ո՛չ համաձայն չեմ», 4-ը՝ «համաձայն եմ», իսկ 5-ը՝ «միանշանակ համաձայն եմ»:

Աղյուսակ

«Մեծ հնգյակը» չափող հարցարանի գործոնների միջին արժեքները, ստանդարտ շեղումները և ալֆաները (հետազոտության առաջին և երկրորդ փուլեր)

Գործոնների և ենթագործոնների անվանումը	α[17] Փուլ 1	α[2] Փուլ 2	M Փուլ 1	SD Փուլ 1	M Փուլ 2	SD Փուլ 2
Էքստրավերտություն	0.862	0.868	3.5	0.465	3.4	0.513
Ընկերասիրություն	0.776	0.727	3.6	0.749	3.4	0.745
Մարդամոտություն	0.819	0.834	3.4	0.854	3.3	0.901
Հաստատակամություն	0.643	0.615	3.4	0.659	3.4	0.576
Ակտիվություն	0.569	-	3.2	0.593	-	-
Ոգևորվածություն/հաճույք փնտրող	0.553	0.593	3.4	0.653	3.5	0.676
Կենսուրախություն	0.597	0.593	3.9	0.590	3.7	0.653
Բարյացակամություն	0.797	0.835	3.4	0.385	3.3	0.466
Վստահություն	0.445	-	3.0	0.563	-	-
Ճշմարտասիրություն	0.640	0.767	3.8	0.624	3.6	0.800
Մարդասիրություն	0.803	0.716	3.8	0.636	3.8	0.651
Համագործակցություն	0.378	0.529	3.3	0.566	3.2	0.664
Համեստություն	0.559	0.524	3.1	0.653	2.9	0.632
Կարեկցանք	0.601	0.647	3.5	0.591	3.2	0.565
Բարեխղճություն	0.820	0.835	3.4	0.390	3.5	0.453
Ինքնարդյունավետություն	0.507	0.555	3.3	0.455	3.4	0.540
Ճշտապահություն	0.659	0.661	3.6	0.689	3.5	0.685
Պարտաճանաչություն	0.544	0.641	3.6	0.608	3.6	0.688
Նպատակասլացություն	0.625	0.709	3.4	0.601	3.6	0.661
Կամքի ուժ	0.505	-	3.3	0.582	-	-
Զգուշավորություն	0.619	0.679	3.4	0.623	3.4	0.691
Նեյրոտիզմ	0.856	0.852	3.0	0.478	3.1	0.529
Տագնապայնություն	0.635	0.676	3.1	0.692	3.0	0.693
Զայրույթ	0.781	0.757	3.2	0.829	3.3	0.802
Դեպրեսիվություն	0.640	0.651	3.2	0.691	3.2	0.711
Ամաչկոտություն	0.575	0.631	3.1	0.691	3.1	0.676
Չափի զգացման պակաս	0.331	-	2.6	0.573	-	-
Խոցելիություն	0.595	0.604	2.9	0.627	2.8	0.688
Լայնախոհություն	0.719	0.787	3.5	0.337	3.6	0.396
Երևակայություն	0.707	0.722	3.8	0.738	3.8	0.730
Արվեստասիրություն	0.662	0.727	3.7	0.660	3.7	0.650
Հուզականություն	0.453	0.555	3.7	0.528	3.7	0.559
Արկածախնդրություն	0.463	0.596	3.7	0.552	3.5	0.618
Ինտելեկտուալ ակտիվություն	0.410	0.506	3.3	0.569	3.4	0.558
Լիբերալիզմ	0.273	-	3.0	0.567	-	-

[17] α – Կրոնբախի ալֆայի գործակից, M– միջին արժեք, StDev – ստանդարտ շեղում:

Ընտրանք

Հետազոտության երկրորդ փուլին մասնակցել է 223 հոգի: Մասնակիցների 32.7 %-ը տղամարդ է, իսկ 67.3 %-ը՝ կին ($M_{տ.}$=19.1, $SD_{տ.}$=5.196): Հետազոտության բոլոր մասնակիցները լրացրել են հարցաթերթ, որում ընդգրկված է եղել «Մեծ հնգյակ» հայալեզու անձնային հարցարանը:

Հուսալիություն

Կրոնբախի ալֆան հինգ մեծ գործոնների համար ստացվել է 0.7-ից բարձր: 25 ենթագործոնների ալֆաների գործակիցները տատանվում են 0.6-0.8 միջակայքում, որը նույնպես համարվում է ընդունելի ցուցանիշ: Այսինքն՝ ստացվում է, որ պնդումների վերանայումից ու վերաձևակերպումից հետո սանդղակները դարձել են ավելի հուսալի:

Աղյուսակում ներկայացված են հարցարանը մշակելու երկու փուլերի յուրաքանչյուր գործոնի և ենթագործոնի միջին արժեքները, ստանդարտ շեղումները և Կրոնբախի ալֆայի գործակիցները:

Վալիդություն

«Մեծ հնգյակ» հայալեզու հարցարանի սանդղակների վալիդությունը ստուգելու նպատակով յուրաքանչյուր սանդղակի համար իրականացվել է հիմնական բաղադրիչների վերլուծություն (անգլ.՝ PCA կամ Principal component analysis), որտեղ դուրս բերվող գործոնների քանակը նշվել է 1: Եթե հուսալիությունը ցույց է տալիս, թե որքանով է հարցարանը կայուն, ապա վալիդությունը ցույց է տալիս, թե հարցարանը բովանդակային առումով որոշում է հենց այն գծերը, որոնք չափելու համար նախատեսված է: Վալիդությունը ստուգելու համար ընդհանուր առմամբ իրականացվել է 30 մոդելների վերլուծություն: Հետազոտական տվյալների համար գլխավոր բացաղրիչների վերլուծության մեթոդ կիրառելու համապատասխանությունը ստուգվել է Կայզեր-Մեյեր-Օլկինի՝ ադեկվատության և Բարտլետի՝ ոլորտայնության չափորոշիչների միջոցով (KMO- Kaiser-Meyer-Oikin Measure of sampling Adequacy and Bartlett test of sphericity), ինչպես առաջին փուլի ընթացքում: Ստացված մոդելները բացատրում են ամբողջի ցրվածության 23-68 %-ը, Կայզեր-Մայեր-Օլկինի գործակիցը մոդելից մոդել տատանվում է 0.493-0.806 միջակայքում, որը համարվում է ընդունելի, Բարտլետի գործակցի նշանակալիության աստիճանը բոլոր մոդելների համար փոքր է 0.05-ից: Ինչ վերաբերում է ամեն սանդղակը կազմող պնդումներին, ապա դրանց գործոնային գործակիցները յուրաքանչյուր սանդղակում տատանվում են 0.4-0.8 միջակայքում:

Ամփոփում

Այսպիսով, կատարված հետազոտությունների արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ մեր ստեղծած «Մեծ հնգյակ» հայալեզու հարցարանը կարելի է համարել հուսալի և վալիդ գործիք անձնային գծերի չափման համար: Հարցարանը կարելի է կիրառել բոլոր այն ոլորտներում, որտեղ անհրաժեշտություն կա բացահայտելու մարդկանց բնավորության առանձնահատկությունները, կազմելու անձնային պրոֆիլներ, օրինակ՝ մարդկային ռեսուրսների կառավարում, կրթություն և այլն:

АСТХИК СЕРОБЯН – ***Создание армяноязычного личностного опросника «Большая пятёрка».*** – В статье представлены этапы создания армяноязычного личностного опросника «Большая пятёрка», процедуры проверки её надёжности и валидности. Весь процесс проводился в два последовательных этапа исследования. Изначально опросник состоял из 150 вопросов, в которых измерялись 5 основных факторов и 30 субфакторов. Однако после двух этапов разработки опросника, во время которых проверялись критерии надёжности и валидности, количество вопросов было сокращено до 125. В результате количество субфакторов стало 25, а для каждого фактора осталось 5 субфакторов вместо 6. В результате был создан надёжный действующий опросник на армянском, который можно использовать для измерения личностных качеств, а также для использования во всех сферах, где необходимо выявить черты характера людей, составить личностные профили, например, менеджер по человеческим ресурсам, образование и др.

Ключевые слова: *Большая Пятерка, разработка опросника, анализ надежности, тест-ретестовая надежность, валидность опросника*

SEROBYAN ASTGHIK – ***Development of the Armenian "Big Five" Questionnaire.*** – The article presents the main phases of the "Big Five" questionnaire development, the results of reliability and validity. The whole process was carried out in two consecutive research stages. Initially, the "Big Five" questionnaire consisted of 150 questions, which measured 5 main factors and 30 subfactors. However, after processes that include two phases of questionnaire development, the number of questions was reduced to 125. As a result, the number of subfactors became 25, and for each main factor, there were 5 subfactors instead of 6. Afterward, we get a reliable and valid questionnaire in Armenian that could be used to measure personality traits, as well as for use in all areas where it is necessary to identify the personality traits, for example, human resources management, education, etc.

Key words: *Big Five, questionnaire development, reliability analysis, test-retest analysis, questionnaire validity*